

Կիսրոսն ու Կոսկասը կամոյին եւ ինքնեկ
ցանկութեամբ լքող բազմութիւններուն մօտ :
Քեմալական թուրքիան ոչ միայն կենդանի
հայրենիքն է հոն սպրող թրքութեան, այլ
նոյնիսկ մագնիս մըն է դուրսի հառաւածնե-
րուն եւ արեւակիցներուն համար :

Այս մագնիսը հեղնական վաքանի եւ
«Տար իւլ Իսլամ»ի առասպելականէն եթէ ա-
ւելի շեշտուած տարբերութիւն մը չունենար,
խենթ չէին այդ գաղթական հարիւր հազա-
րաւորները՝ որպէս տուն ու տեղ, սպրուտի
եւ կեանքի այլ յարմարութիւններ ձգած նոր
բախտ ու ապագայ հետապնդէին :

Յունաստանի մէջ հրատարակուած վիճա-
կազրութեան մը 'Տամաճայն, փոխամակու-
թեան ենթակայ թուրքերուն այնտեղ մնացած
կալուածներու արժէքը կը հասնի 132,952,
911 ոսկիի (տոլարով՝ կիսապատիկը) : Սոյն
կարուածներու 32,000 կտորէն տարեկան
վարձը կը դանձուի 85,595,973 տրախմի : «Ազ-
շաճ» կը գրէ՝ թէ յոյներուն թողած ձմէն տե-
սակի բոլոր կալուածներուն ընդհանուր ար-
ժէքը շատ վար կը մնայ վերի գումարէն :

Առարկողներուն պիտի հարցնենք, թէ
հայրենիքի եւ ազգային անդորրութեան տե-
սիլքէն զատ ուրիշ ի՞նչ զգացում կրնայ այս-
պէս մարդկային ստուարաթիւ զանգուածներ
յափշտակել ու առննդել : Եթէ ասոր վրայ
բարդենք Աերպիտայն, Պուլկարիայն եւ միւս
վայրերէն գաղթող բազմութիւններուն «Տար
իւլ Իսլամ»էն երկար տարիներէ ի վեր կառը-
ուած ու բաժնուած ըլլալու հանգամանքը, այն
ստեն աւելի կը պարզուի՝ թէ ի՞նչ է որ հար-
իւր հազարաւորներու կամաւոր տեղափոխու-
թեան ու ուխտագնացութեան զրգիւ կը հան-
դիսանայ :

Հարկաւ, Յունաստանն ու Պուլկարիան եւ
Սերպիան աւելի կուլտուրական եւ քաղաքա-
կըրթուած երկիրներ են քան թուրքիան, բայց
այդքանը չի հրապուրեր ու քարացներ թուր-
քերը : Մարդիկը նախամեծար կը համարեն
սեփական հայրենիք մը ունենալ, թէեւ նուազ
բարգաւաճ ու հրապուրիչ, քան սպրիլ ու
մեռնիլ այնպիսի իշխանութիւններու տակ՝ ուր
ոչ քուրքերէն կ'իշխէ եւ ոչ ալ քրքուրքեան
գաղափարն ու գաղափարաբանութիւնը : Այս

տեսակէտէն, կարելի է այն եզրակացութիւնը
հանել՝ որ ո՛չ միայն Քեմալիստանի բնակիչ-
ները, այլ նոյնիսկ արտասահմանի քուրքերն
անգամ հայրենիքի գաղափարին ու խտրաբան
հաղորդականութեամբ կը շնչեն :

Ու թուրքիոյ մէջ թրքանալու եւ ճուլուե-
լու հակամիտութիւն ցոյց չտուող հայերուն,
յոյներուն եւ հրէաներուն դէմ կիրառուած հա-
լածանքներն ու քարոզչութիւնները՝ հայրենի-
քը իրենց, միայն իրենց վերապահելու տա-
րապայման ըղձանքէն ու եսասիրութենէն չե՞ն
բխիր : «Լքեալ գոյքեր»ու անունին տակ կա-
տարուած ամենօրեայ բռնադրաւումներն ու
յափշտակութիւնները երկիրը անբարեյոյս բե-
կորներէ մաքրելու եւ ասոնց ստեղծած թա-
փուրը իրենք բռնելու մտասեւեռումին ար-
դիւնքը չէ՞ :

Անշուշտ հայրենիքի եւ հայրենասիրութեա-
նը թրքափարի այս հակացողութիւնը խոտոր
կը համեմատի եւրոպական կարգերու եւ քա-
ղաքակրթական բարձրութիւններու ձգտող
ժողովուրդի մը վարկին ու տիտղոսին : Թուր-
քերը քաջ զիտեն իրենց «թերութիւն»ները եւ
զիտնալով հանդերձ կը շարունակեն իրենց
մեղքն ու աւերը, մինչեւ որ ազատին ներքին
տեսակի բոլոր խոչընդոտներէն : Այս է իրենց
հայեացքն ու ընթացքը : Եւ խոստովանինք՝
որ այդ ճամբով ալ հասան իրենց նպատակին,
բնաջնջելով հայերը եւ արհամարհելի քանա-
կութեան վերածելով յոյները, — երկու քաղա-
քակրթ եւ կուլտուրական ժողովուրդներ, ո-
րոնց նման հայրենիքի զիտական եւ ճշմարիտ
բժբոնում չեն ունեցած եւ չունին թուրքերը,
ըստ ընկ. Ռուրէնի սնդումներուն :

Ուրիշը կոտորելով եւ հալածելով արմա-
տացող ու հիմնաւորուող հայրենիքի գաղա-
փարը խկապէս որ տհաճելի եւ անբարոյական
երեւոյթ է : Այս մասին ոչ մէկ կասկած, բայց
կոտորողն ու հալածողն է եղած շահաւորը
միշտ : Երբ կ'սպրիս ու երկիր ունիս, քեզի չեն
հարցնիր, թէ պղատոնական սէրո՞վ կապուած
ես անոր, թէ խօյական մօլուցքով : Ի՞նչ ձեւով
ալ որ լմբոնէ թուրքը իր հայրենիքը, փաստն
այն է՝ որ կա՛յ անիկա, շնչաւոր եւ հզօր,
յաղթական ու յեղափոխական, հակառակ մեր
չկամութեանց ու սպէս նախանձին :